ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

(Հայրենական մեծ պատերազմի սկսվելու 50-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիները ինչքան հեռանում են պատմության խորքը, այնքան ավելի ճշմարտացիորեն ու վավերականորեն ներկայանում երկրորդ համաշխարհային պատերազմի ուսումնասիրողներին։ Արխիվային նոր փաստաթղթերը թույլ են տալիս ոչ միայն վերացնել «սպիտակ բծերը» և ցույց տալ թույլ տրված կոպիտ սխալները, այլև բացահայտել գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տարած մեծ հաղթանակի գլխավոր հերոսի՝ Խորհրդային Միության ժողովուրդների հերոսական սխրանքները։

Հայտնի է, որ պատերազմի սկիզբը ողբերգականորեն դասավորվեց Խորհրդային ժողովուրդների համար։ Դա հաճախ բացատրվում է միայն Խորհրդային Միության վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակվելու պահին ստալինյան ղեկավարության թույլ տված վրիպումներով։ Սակայն հենց ռայխի փաստաթղթերը ցույց են տալիս, որ խորհրդային ղեկավարությունը վրիպումներ էր թույլ տվել ոչ միայն թշնամու զորքերի անմիջականորեն ԽՍՀՄ-ի սահմանները ներխուժելու ժամկետի հարցում, այլև Գերմանիայի հետ չհարձակվելու պայմանագրի ստորագրման պահից՝ 1939 թ. օգոստոսի 23-ից մինչև 1941 թ. հունիսի 22-ն ընկած ամբողջ ժամանակամիջոցում, երբ թույլ էին տրվել մի ամբողջ շարք քաղաքական, դիվանագիտական և ռազմաստրատեգիական սխալներ։

Ռայխի փաստաթղթերում քիչ վկայություններ չկան այն մասին, որ նացիստները, չհարձակվելու ուխտ կնքելով Խորհրդային Միության հետ, հեռահար ստրատեգիական նպատակներ էին հետապնդում և ճարպկորեն էին օգտագործում խորհրդային ղեկավարության հավատարմությունը պայմանագրային պարտավորություններին։ Բառացիորեն այդ նույն 1939 թ. օգոստոսյան օրերին Հիտլերը իր մերձավորների նեղ շրջանակում այսպիսի արտահայտություն էր արել. «Այն ամենը, ինչ ձեռնարկում եմ, ուղղված է Ռուսաստանի դեմ»։ Վերմախտի ղեկավարների 1939 թ. նոյեմբերի 23-ի խորհրդակցությունում նա է՛լ ավելի հստակ էր պարզաբանել իր արտահայտությունը. «Ռուսաստանը ներկայումս վտանգ չի ներկայացնում։ Այժմ նա թուլացած է բազմաթիվ ներքին հարընթացներից։ Բացի այդ, մենք պայմանագիր ունենք Ռուսաստանի հետ։ Սակայն պայմանագրերը կիրառվում են մինչև այն պահը, քանի դեռ նպատակահարմար են»[1]։

Այս իմաստով առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում ֆաշիստական ռայխի փաստաթղթերը, որոնք որպես ռազմաավար վերցվել էին ամերիկյան զորքերի կողմից և փոխադրվել ԱՄՆ[2]։ Տողերիս հեղինակն

---

[1] Свершенно секретно! Только для командования! Стратегия фашистской Германии в войне против СССР. Документы и материалы. М., 1967, с. 78.

[2] *Այդ փաստաթղթերի մի մասը, որոնք վերաբերում են Խորհրդային Միության դեմ Գերմանիայի պատերազմի նախապատրաստությանը և զավթված խորհրդային տարածքում գերմանական օկուպացիոն իշխանությունների քաղաքականությանը, միկրոկինոժապավենների ձև-*

աշխատել է այդ ֆոնդի փաստաթղթերի վրա։ Պետք է ասել, որ գրանցում հետաքրքիր շատ բան կա։

Երբ 1940 թ. հունիսի 22-ին Ֆրանսիան անձնատուր եղավ, Հիտլերը պայմանական հրաման արձակեց. «Հարվածային ուժերը դեպի Արևելք»։ Նա շտապում էր, ուզում էր «արևելյան արշավանքն» սկսել դեռևս 1940 թ. աշնանը, քանի դեռ Խորհրդային Միությունը չէր հասցրել ամրապնդել իր նոր արևմտյան սահմանները։ Բայց փորձառու գեներալները ֆյուրերին համոզեցին, որ Խորհրդային Միությունը լուրջ հակառակորդ է, բացի այդ էլ առջևում ձմեռ է։ Հատկանշական է նաև մի այսպիսի մանրամասն։ Երբ 1940 թ. դեկտեմբերին մշակվեց Խորհրդային Միության վրա հարձակվելու պլանի առաջին տարբերակը «Բարբարոսա» ծածկագիր վերնագրով, Ստալինը, անհանգստացած լինելով Գերմանիայի իր համար անհասկանալի վարքագծով, Մոլոտովին շտապ կարգով Բեռլին ուղարկեց իրադրությունը պարզաբանելու համար։ Բայց Հիտլերը հրաժարվեց բանակցություններ վարել խորհրդային ղեկավարությանը հուզող հարցերի շուրջը, և նրա ուշադրությունը շեղելու համար Խորհրդային Միությանն առաջարկեցին միանալ «Հակակոմինտերնական պակտին» և մասնակցել Բրիտանիայի կայսրության բաժանմանը[3] լավ իմանալով, որ Խորհրդային Միությունը կմերժի այդ առաջարկությունները։ Բայց Հիտլերի այդ ձեռնարկումներն էլ ըստ էության չզգաստացրին խորհրդային ղեկավարությանը։

Չնայած երկու տերությունների միջև կնքված չհարձակման ուխտին, քաղաքական և դիվանագիտական պայքարը շարունակվում էր։ Ընդ որում, այն ժամանակ, երբ Գերմանիան ուժգնորեն նախապատրաստվում էր հարձակվելու Խորհրդային Միության վրա, Ստալինը և Մոլոտովը ամեն կերպ պրոպագանդում էին բարեկամություն ֆաշիստական Գերմանիայի հետ։

Ստալինը և նրա մերձավոր շրջապատը իրենց ճառերում և ելույթներում, խորհրդային մարդկանց աչալրջության կոչ անելով հանդերձ, հենց իրենը էին աններելի քաղաքական կարճատեսություն դրսևորում նացիստական կայսրության պարագլուխների հակախորհրդային մեքենայությունների նկատմամբ։ Խորհրդային ղեկավարությանը չէին զգաստացնում ո՛չ հետախուզական ծառայությունների տվյալները, ո՛չ օտարերկրյա մամուլի և պետական գործիչների զանազան կարգի հաղորդումները։ Եվ պատահական չէ, որ երբ ամբողջ աշխարհն արդեն խոսում էր Գերմանիայի և ԽՍՀՄ-ի մոտալուտ պատերազմի, ԽՍՀՄ-ի սահմանների մոտ ֆաշիստական զորքերի կենտրոնացման մասին, խորհրդային մամուլը 1941 թ. հունիսի 14-ին տպագրեց ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը, որը կտրականապես հերքում էր անգլիական և ընդհանրապես արևմտյան մամուլում հաճախակի դարձած լուրերն այն մասին, թե մոտ է պատերազմը ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև, դա անվանելով «ապաշնորհ սարքված պրոպագանդա»։

Ստալինի և նրա շրջապատի մեղքով խորհրդային ժողովուրդը գաղափարապես անպատրաստ եղավ ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմին։ Ստալինը, օժտված լինելով անսահմանափակ իշխանությամբ, քիչ էր հաշվի նստում մասնագետների կարծիքի հետ, իրեն համարելով միակ ռազմավարը, մեծ զորավար։ Մինչդեռ, մարշալ Ժուկովի գնահատմամբ, պատերազմից առաջ և նրա սկզբին Ստալինը շատ աղոտ պատկերացում ուներ ռազմական գործի մասին։ Դա լավ էր հայտնի նաև նացիստական ղեկավարությանը։

Ներկայումս, երբ ֆաշիստական ռայխի փաստաթղթերը դարձել են երկրորդ համաշխարհային պատերազմի հետազոտողների սեփականությունը, քիչ

վով գնվել են Ուկրաինական ԽՍՀ-ի կողմից և պահվում են Ուկրաինական ԽՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության ու սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվի ԿՄՏ—8 ֆոնդում։

[3] Տե՛ս Р. Медведев. Они окружали Сталина.—Юность, 1989, № 3, с. 72.

չեն պատահում այնպիսիները, որոնք վկայում են, որ նացիստ պարագլուխները ճարպկորեն էին շահարկում Ստալինի և խորհրդային ղեկավարության կույր հավատարմությունը Գերմանիայի հետ ունեցած պայմանագրային պարտավորություններին։ Անգամ 1941 թ. հունիսյան օրերին, երբ պատերազմն արդեն ուղղակի բախում էր մեր դուռը, երբ խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակվելու մասին հաղորդում էին մեր հետախույզները, մասնավորապես Զորգեն, հաղորդում էր Անգլիայի վարչապետ Չերչիլը, երբ գերմանացիները սկսել էին քանդել լարափակոցները լեհ-խորհրդային սահմանում, նավակամրջային միջոցներ փոխադրել դեպի սահմանային գետերը՝ մեր տարածք փոխադրվելու համար և այլն, Ստալինը տակավին չէր զգաստանում։ Նա այն կարծիքին էր, թե Գերմանիան չի համարձակվի հարձակվել։ Բայց նա համարձակվեց և ոչ թե միայնակ, այլ հակախորհրդային դաշինք կազմած, որի մեջ մտել էին նաև Իտալիան, Ռումինիան, Հունգարիան և Ֆինլանդիան։

1941 թ. հունիսի 21-ի լույս 22-ի գիշերվա հոգեցունց վիճակից հետո «ժողովուրդների առաջնորդը» ցուցում տվեց ամեն գնով կանգնեցնել թշնամուն, ինչ գնով էլ լինի հաղթել նրան։ Ճակատայինները լավ գիտեին, թե ինչ էր նշանակում «ամեն գնով» ստալինյան ցուցումը։ Զինվորները միլիոններով էին զոհվում, ընկնում թշնամական շրջապատման մեջ ու գերվում։ Փաստերը վկայում են, որ խորհրդային երկիրը մարդկային ու նյութական շատ անտեղի կորուստներ կրեց ֆաշիստական ռայխի, նրա պարագլուխների պլանները գնահատելիս Ստալինի և նրա շրջապատի թույլ տված սխալների ու վրիպումների հետևանքով։ Մենք հաղթեցինք, բայց շատ տևական պայքարում և թանկ գնով։

Ֆաշիստական ռայխի ռազմատավարային փաստաթղթերի թվում քիչ չեն այնպիսիները, որոնք վկայում են, որ ֆաշիստական Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը չափից ավելի էր թերագնահատում կարմիր բանակի ուժը։ «Բարբարոսա» ստրատեգիական պլանը տոգորված է ինքնավստահության, խորհրդային Միության ռազմական զորության մեծամիտ թերագնահատման ոգով։ Մի շարք փաստաթղթերում նշվում է ԽՍՀՄ ժողովուրդների դժգոհությունը խորհրդային կարգերից, Մոսկվայի բոլշևիկյան քաղաքականությունից, փստահություն է հայտնվում, թե կարմիր բանակը կշախջախվի ֆաշիստական ռազմական մեքենայի առաջին իսկ հարվածներից։

Այս իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1941 թ. մայիսի 9-ին ռայխամինիստր Ռոզենբերգին ներկայացված փաստաթուղթը, որը կցված էր պատերազմի սկսվելու առթիվ ռուս ժողովրդին ուղղված «Գերմանիայի կայսրության կառավարության հռչակագրի» տեքստին[4]։ Փաստաթղթում տվյալներ են բերված 1920-ական և 1930-ական թթ. մարդահամարի համաձայն ԽՍՀՄ-ի բնակչության հիմնական խմբերի ազգային կազմի մասին, թվարկված են այն ժողովուրդները, որոնք, իբր, «շահագրգռված են քաղաքական որոշում ընդունելու» «ինքնիշխան» պետություններ կազմելու մասին։ Թվարկումն ընթանում է հետևյալ հերթականությամբ. ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, ֆիննական ժողովուրդներ, հրեաներ, վրացիներ, հայեր, գերմանացիներ, կովկասյան ժողովուրդներ։ Հենց այստեղ էլ նշված է նրանց թվական կազմը[5]։

Ռայխի փաստաթղթերի թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն նյութը, որը մի խումբ խոշոր մասնագետներ պատրաստել էին պատերազմի օրը ռադիոյով Հիտլերի արտասանելիք ճառի համար, ինչպես նաև Ռոզենբերգի ելույթի և խորհրդային ժողովրդին ուղղված գերմանական ռայխի հռչակագրի տեքստի նախապատրաստման համար։ Այն ունի «Միանգամայն գաղտնի» նշումը, թվագրված է 14. 06. 1941, այսինքն պատերազմի

4 Ուկրաինական ԽՍՀ ՀՀՍՇԿՊԱ, ֆ. ԿՄՖ-8, ց. 1, գ. 171, թ. 51։

5 Նույն տեղում, թ. 59։

սկսվելուց ութ օր առաջ։ Այդ փաստաթղթում տրված է մեր երկրի ազգային կազմի հակիրճ բնութագիրը, ասվում է կոլեկտիվացման շրջանում գործադրված զանգվածային բռնացումների, 1928—1931 թթ. հարյուր հազարավոր գյուղացիներին աքսորելու, երկրում սկսված սովի մասին, ինչը, գերմանացի մասնագետների կարծիքով, խորհրդային կարգերի անկայունություն էր ստեղծում[6]։

Այդ և մի շարք այլ փաստաթղթերում, որոնք հասցեագրված էին ռայխսմինիստր Ռոզենբերգին, որպես գերմանացիների համար բարենպաստ հանգամանքներ էին նշված մարշալ Տուխաչևսկու դատավարությունը, զինվորականների զանգվածային բռնացումները, որի հետևանքով ոչնչացվեց զինված ուժերի բարձրագույն հրամկազմի (գերագույն հրամանատարությունից մինչև բանակների հրամանատարները) 60—70 տոկոսը[7]։

Խորհրդային «ազգային քարտեզն» օգտագործելու նացիստ պարագլուխների հաշվարկները առանձնապես հանգամանորեն են շարադրված «Ռայխսմինիստր Ա. Ռոզենբերգի ճառը ամենանեղ շրջանակի առջև՝ նվիրված արևելյան խնդրին» վերնագրով փաստաթղթում[8]։ Այն արտասանվել էր պատերազմի սկսվելուց մեկ օր առաջ՝ 1941 թ. հունիսի 20-ին։ Ծավալուն կերպով շարադրելով Խորհրդային Միության դեմ ուղղված պատերազմի պատճառները, Ռոզենբերգը հայտարարել էր, թե դա բնավ էլ «Խաչակրաց արշավանք» չէ բոլշևիկների դեմ «Ստալինին ուրիշ ցարով փոխարինելու, իսկ Ռուսաստանը որպես միասնական պետություն թողնելու» համար։ Անհրաժեշտ է «Մոսկվայի դեմ ուղղել» այդ հսկայական կայսրության տարածքում ապրող... տասնյակ ցեղերին[9]։ Նա չէր թաքցնում, որ նրանց առանձին-առանձին հեշտ է ենթարկել գերմանական ազդեցությանը։ Իսկ ինչ վերաբերում է Մերձբալթիկային, ապա նա այստեղ ոչ մի խնդիր չէր տեսնում, հայտարարելով, թե «Մերձբալթիկան գերմանական ռայխի հնագույն գաղութն է եղել»։ Նշանակում է՝ այն այդպիսին էլ պետք է դառնա[10]։

Խոսելով Կովկասի մասին, Ռոզենբերգը հայտարարել էր, թե այնտեղ ապրում են վրացիներ, հայեր, թաթարներ, չերքեզներ, չեչեններ, արխազներ, կարաչայներ և ուրիշներ։ Եթե այդ ժողովուրդները թողնվեն իրենց բախտին, ապա նրանք իրար կոկորդ կկրծեն։ Ուստի, հայտարարել էր ռայխսմինիստրը, նպատակահարմար է այստեղ ստեղծել ազգային պետություններ Գերմանիայի հովանու ներքո[11]։

Ռոզենբերգի ճառում հստակորեն է դրսևորվում ազգային հարցին առնչվող մի գաղափար. երկերեսանիաբար ինքնուրույնություն խոստանալով ԽՍՀՄ-ի ոչ ռուս ժողովուրդներին, նրանց հակադրել ռուս ժողովրդին, իսկ այնուհետև նրանց նվաճել առանձին-առանձին։ Այդ նպատակով և պատերազմի սկսվելու կապակցությամբ Ռոզենբերգը հռչակագիր էր բաց թողել, որով ազատություն էր խոստանում Խորհրդային Միության ժողովուրդներին։ Բայց այդ ամենը ամբոխավարություն էր ու կեղծիք։ Դրա պերճախոս վկայությունն է հենց թեկուզ երրորդ ռայխի պարագլուխների հետ ուկրաինացի ազգայնականների սերտ կապերի պատմությունը։ Վերջիններիս հիտլերականները հավաստիացնում էին, թե հենց որ գերմանական զորքերը մտնեն Ուկրաինայի տարածք, կկազմվի ինքնուրույն ուկրաինական պետություն։ Ուկրաինացի օունականների վտարանդիական կենտրոնը, որը գտնվում էր Կրակովում, հիտլերականներին մեծ ծառայություն մատուցեց ԽՍՀՄ-ի դեմ պատերազմը նախապատրաստելու գործում։ Օունականները, հիտլերական-

6 Նույն տեղում, գ. 101, թ. 1—4։

7 Նույն տեղում, ց. 2, գ. 145, թ. 62—63։

8 Նույն տեղում, ց. 1, գ. 171, թ. 98։

9 Նույն տեղում, թ. 3։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում, թ. 98։

ների խոստումներից ոգևորված, վաղօրոք ազդակոչ էին նախապատրաստել Ուկրաինան ինքնուրույն պետություն հռչակելու մասին։ Ուկրաինացի ազգայնականների գործակալները դեռ մինչև պատերազմի սկսվելը, այդ «Ազդակոչի» տեքստը ձեռքներին անցնում էին Արևմտյան Ուկրաինայի շրջանները և այն հրապարակելու ազդանշանի սպասում։ Եվ ահա ավարտը։ 1941 թ. հունիսի 30-ին, երբ օտնական ղեկավարությունը Ստեպան Բանդերայի գլխավորությամբ գերմանական զորքերի հետ միասին մտավ Լվով և հրապարակվեց «Ուկրաինական ինքնուրույն միասնական տերություն» հռչակելու մասին «Ազդակոչը», որով այդ տերության գլուխ էր կարգվում Յարոսլավ Ստեցկոն, դա հարուցեց հիտլերականների կատաղությունը։ Ուկրաինացի ազգայնականների այդ քայլը հակասում էր Ուկրաինան գերմանական գաղութի վերածելու հիտլերականների պլաններին։ Զինվորական հրամանատարությունը այդ օրը ձերբակալեց Բանդերային և Ստեցկոյին, ցրեց էրենց անցանկալի այն ուկրաինացի ազգայնականներին, որոնք հիտլերականներից պահանջում էին կատարել Ուկրաինային ինքնուրույնություն տրամադրելու խոստումները։

Հարկ է նշել, որ վերակառուցման, հրապարակայնության և ժողովրդավարության լայն զարգացման պայմաններում հայտնվել են ոչ քիչ թվով մարդիկ, որոնք պատրաստ են արատավորելու մեր ամբողջ պատմական անցյալը և նույնիսկ այն 27 միլիոն խորհրդային մարդկանց պայծառ հիշատակը, որոնք իրենց կյանքը դրեցին մեր հայրենիքի պաշտպանության զոհասեղանին։ Ընդ որում այդ ճամարտակողների թվում կան նաև այնպիսիները, որոնք երեկ հավատարմորեն ու ճշմարտորեն ծառայում էին ամբողջատիրական համակարգին, իսկ այսօր ժողովրդավարների դիմակ են հագնում և արատավորում մեր ամբողջ անցյալը, որպեսզի ոմանց ցույց տան իրենց նվիրվածությունը։

Ցավոք, նմանները կան նաև մեր հանրապետությունում։ Ոմանք նույնիսկ հասնում են անհեթեթության, մերկապարանոց հայտարարելով, թե հայ ժողովուրդը չպետք է մասնակցեր Հայրենական մեծ պատերազմին, թե այն միայն դժբախտություններ բերեց նրան։ Արդյո՞ք այդպես է։ Պատահակա՞ն է արդյոք, որ հայ ժողովուրդը դարձավ Հայրենական մեծ պատերազմի մարտական մասնակիցը։ Արդյոք այլ ելք կա՞ր նրա համար, որ պահպաներ իր ազատությունը, անկախությունն ու ֆիզիկական գոյությունը Խորհրդային Միությանը ֆաշիստական Գերմանիայի պարտադրած բնաջնջիչ պատերազմի իրադրության մեջ։ Կամ մի այսպիսի հարց. պատերազմի սկսվելու կապակցությամբ արդյոք գոյություն ունե՞ր թուրքական զորքերի Այսրկովկաս ներխուժելու իրական սպառնալիք։

Նախ և առաջ Թուրքիայի կողմից Հայաստանին սպառնացող վտանգի մասին։ Պատերազմի առաջին իսկ օրվանից այդ հարևան երկրում աղմկալից հակախորհրդային համաշարժում էր ծավալվել, որին տոն էին տալիս իրենց հիտլերյան տիպի նացիոնալ սոցիալիստներ համարող համաթյուրքամոլները։ Նրանք յուրովի էին մեկնաբանում ֆաշիստական ռասայական տեսությունը։ Թուրք ազգը հայտարարելով բոլոր մուսուլման թյուրքալեզու ժողովուրդներին միավորող գլխավոր ուժ, նրանք չէին թաքցնում այսպես կոչված ապագա Մեծ Թուրքիայի տարածքը այն բոլոր քրիստոնյա ժողովուրդներից մաքրելու իրենց նպատակը, որոնք գտնվում էին դեպի Արևելք ընկած նրանց ճանապարհին։

Պատերազմի սկսվելուց հետո շուտով լույս տեսավ համաթյուրքականների «Բոզկուրտ» («Գորշ գայլ») հանդեսի հուլիսյան համարը։ Այդտեղ զետեղված էր մի հոդված՝ «Թյուրքությունը սպասում է» բարձրագոչ վերնագրով[12]։ Եվ որպեսզի ընթերցողը ակնթարթորեն տեսնի, թե թյուրքությունն իսկապես ինչ է սպասում, հոդվածին կցված էր այսպես կոչված ապագա «Մեծ

12. Տե՛ս «Большевик» (журнал), 1944, № 10—11, с. 82

Թուրքիայի» քարտեզը։ Համաթյուրքականները վստահ էին Խորհրդային Միության դեմ ֆաշիստական Գերմանիայի հաղթանակին և թուրքական զորքերի Այսրկովկասի տարածք ներխուժելու հաջողությանը։ Այդ պատճառով էլ նրանք աճապարեցին Թուրքիայի կայսրության կազմի մեջ ընդգրկել ամբողջությամբ Այսրկովկասի և Միջին Ասիայի բոլոր հանրապետությունները, Հյուսիսային Կովկասի մի մասը և Ղրիմը։

Թուրքերը գտնում էին, որ այդ ամբողջ տարածքը պետք է մաքրվի այլահավատ ժողովուրդներից, որոնք համարվում էին Թուրքիայի կայսրության թշնամիներ, ու նախ և առաջ հայերից։ Դա չէր թաքցնում և մի այլ թուրքական հանդես՝ «Ջինար-ալթինը»։ Նրա էջերում տպագրված էր. «Թուրքերը կնվաճեն Կովկասն ու Ղրիմը և կքշեն թշնամիներին», այսինքն ոչ մուսուլմանական հավատի մարդկանց[13]։

Հիտլերն օրեցօր սպասում էր, որ ուր որ է Թուրքիան պատերազմի մեջ կմտնի ԽՍՀՄ-ի դեմ։ Նա անհամբերությամբ հարցնում է իր դիվանագետներին. «Ինչպե՞ս է թուրքերի խնդիրը»։ Նրան զեկուցում են, որ Թուրքիայի կառավարության վարչապետ Սարաջօղլուն գերմանական դեսպանի հետ զրուցելիս հայտարարել է, թե «որպես թուրք ինքը բուռն ցանկանում է Ռուսաստանի ոչնչացումը... Ռուսական խնդիրը կարող է լուծվել Գերմանիայի կողմից. եթե միայն սպանվի Ռուսաստանում ապրող բոլոր ռուսների առնըվազն կեսը»[14]։

Մեր երկիրը մոլի ատող արտաքին գործերի մինիստր Մենեջիօղլուն այսպես է բնութագրել իր կառավարության վերաբերմունքը Խորհրդային Միության նկատմամբ. «Թուրքիան,— հայտարարել է նա,— ինչպես որ առաջ, այնպես էլ այժմ ամենայն վճռականությամբ շահագրգռված է Ռուսաստանի առավել լիակատար պարտությամբ»։ Նա չէր թաքցնում, որ Թուրքիան եղել է և մնում է Խորհրդային Միությանը թշնամի ճամբարում։

Հասկանալու համար, թե ֆաշիստական Ռայխի պարագլուխները և Թուրքիայի կառավարող շրջանները ինչ ծրագրեր էին նյութում Կովկասի և նրա ժողովուրդների դեմ, բավական է աչքի անցկացնել ռայխսմինիստր Ռոզենբերգի «Կովկասյան թղթապանակի» փաստաթղթերը։ Նյուրնբերգի դատավարության ժամանակ, որտեղ դատվում էին ֆաշիստական կայսրության պարագլուխները, այդ թղթապանակից միջազգային ատյանին էին ներկայացվել «Կովկասը վերափոխելու մասին» զեկուցագիրը, «Նկատառումներ Կովկասի քաղաքական ապագայի մասին», «Կովկասյան զորամասերի հարցը» և մի քանի այլ փաստաթղթեր, որոնցից պարզ երևում է, որ Կովկասում գերմանացիները մտադիր չէին իշխանությունը կիսել տեղական ժողովուրդներից որևէ մեկի հետ։ Առաջին իսկ փաստաթղթում պարզ ասված է, որ գերմանական քաղաքականության նպատակն է տիրապետություն հաստատել Կովկասում և հարավից սահմանակից երկրներում[15]։

Հատկանշական է, որ երբ Ռոզենբերգը Հիտլերի հետ խոսք էր բացել այն մասին, թե միգուցե պետք է Կովկասի և ԽՍՀՄ-ի որոշ այլ ազգային շրջանների բնակչության հետ ավելի մեղմ հարաբերություններ հաստատել, քան ռուսների, ֆյուրերը կտրուկ մերժել էր այդ առաջարկությունը, հայտարարելով, որ այդ երկրի բոլոր ժողովուրդները, առանց բացառության, իրենց գոյության համար միայն մեկ արդարացում ունեն՝ տնտեսական տեսակետից օգտակար լինել գերմանացիներին։ Իսկ դրա համար, հայտարարել է Հիտլերը, «Ռուսաստանի լայնարձակ տարածքներում ապրող ժողովուրդների նկատմամբ մեր քաղաքականության էությունը պետք է լինի տարաձայնու-

---

13 Նույն տեղում, էջ 83։

14 Տե՛ս В. Карпов. Полководец. М., 1990, с. 175.

15 Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Сборник материалов в трех томах. Юридическая литература, Т. II, М., 1966, с. 206—226.

թյունների ու պառակտման ցանկացած ձևի խրախուսումը»[16]։ Նա իր մերձավորներին բացեիրաց ասում էր, որ ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմում իր հիմնական նպատակն է այդ երկրների ժողովուրդներին զրկել «պետական կազմակերպման ամեն մի ձևից և դրան համապատասխան նրանց պահել քաղաքակրթության հնարավորին չափ ցածր մակարդակի վրա»[17]։

Ֆաշիստական կայսրության փաստաթղթերում քիչ հիշատակումներ չկան հայերի և «հայկական հարցի» մասին։ Ռոզենբերգի դարձյալ նույն «Կովկասյան թղթապանակի» III բաժնի «Կովկասը վերափոխելու մասին» փաստաթղթում կարդում ենք. «Ադրբեջանցիները, մահմեդականներ լինելով, բնական մշակութային հակում ունեն դեպի Թուրքերը, որոնց լեզվով են նրանք խոսում։ Քանի որ Թուրքերի առջև փակ էին Արևմուտքի ճանապարհները, Թուրքիայում գոյություն ունի ուժեղ շարժում դեպի Արևելք, ընդարձակվելու նշանաբանով»։ Բայց քանի որ Արևելքում նա նախ և առաջ սահմանակից է Վրաստանի և Հայաստանի քրիստոնյա ժողովուրդներին, ապա փաստաթղթով առաջարկվում է թյուրքականության գաղափարներն օգտագործել ոչ միայն մշակութային, այլև քաղաքական նպատակներով։ Փաստաթղթում ընդգծվում է, որ թյուրքական և համաթյուրքական գաղափարները գոյություն ունեն, և Արևելքի ընդհանուր վերափոխման կապակցությամբ դրանք կարող են քաղաքական բնույթ ստանալ։ Ուստի պետք է հաշվի առնվի, որ Ադրբեջանի և Թուրքիայի միջև գտնվում է Հայկական լեռնաշխարհը։ Հայերը, լինելով քրիստոնյաներ, դարեր ի վեր Թուրքերի թշնամիներն են[18]։

Այստեղից էլ հիտլերականները Թուրքերին առաջարկում են ռազմական նպատակներին հասնելու համար օգտագործել նաև կրոնական գործոնը, հասկանալի է, նախ և առաջ Կովկասում։ Այդ նույն փաստաթղթում ընդգծված է, որ Թուրքերը հիմքեր ունեն ընդարձակվելու Արևելքի հաշվին, որի համար կարող է օգտագործվել նաև «հայկական հարցը»։ Այլ խոսքով, եթե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կայզերական Գերմանիան օրհնել էր երիտԹուրքերի կազմակերպած հայկական ցեղասպանությունը, ապա, ինչպես երևում է այս փաստաթղթից, Հիտլերը երկրորդ աշխարհամարտում պարզապես կարող էր զոհաբերել Արևելյան Հայաստանի բնակչությունը։

Որ հիտլերականների կողմից Կովկասի ժողովուրդների ճակատագիրը կանխորոշված էր Խորհրդային Միության վրա հարձակվելուց դեռ շատ առաջ, վկայում են նաև վերմախտի գլխավոր շտաբի պետ, գեներալ Հալդերի Օրագրում այդ երկրամասի վերաբերյալ արված բազմաթիվ գրառումները։ Այսպես, օրինակ, 1941 թ. մարտի 17-ին իր Օրագրում նա այսպիսի գրառում էր կատարել. «Կովկասը հետագայում կտրվի Թուրքիային, այն մեր կողմից օգտագործելու պայմանով...»[19]։

Ավելորդ չէ նշել, որ Թուրքիայի խնդիրը շատ եռանդուն էր քննարկվում ռայխի ղեկավար շրջաններում։ Բալկանյան թերակղզուն տիրանալու օրերին նույնիսկ եղել էին պահեր, երբ վերմախտը պետք է հարվածեր Թուրքիային և տիրանար նեղուցներին[20]։ Բայց Հիտլերին տարհամոզել էին։ Խորհրդային Միության դեմ մղվելիք մեծ պատերազմի շեմին անխոհեմություն կլիներ կապ ընկնել Թուրքիայում։ Ավելի լավ էր ցանկացած գնով նրան գրավել ռայխի կողմը և օգտագործել Խորհրդային Միության դեմ մղվելիք պատերազմում։ Երևում է, բարձրագույն խորհրդակցություններից մեկում այդ խնդրի բուռն քննարկումից հետո էլ արվել էր Կովկասի ճակատագրի մասին Հալդերի վերը բերված գրառումը։ Բայց, ինչպես երևում է այդ գրառումից,

16 Совершенно секретно! Только для командования!..., с. 178.

17 Նույն տեղում, էջ 99։

18 Нюрнбергский процесс..., т. II, с. 210.

19 Совершенно секретно! Только для командования!..., с. 178.

20 Տե՛ս նույն տեղում, էջ 146—147։

Կովկասի նկատմամբ պատրաստվում էին տեր ու տնօրինություն անել և՛ թուրքերը, և՛ գերմանացիները։ Դա երևում է նաև Հիտլերի այն կտրական հայտարարությունից, թե «վոլգյան գաղութները պետք է դառնան կայսրության մարզը, ճիշտ այնպես, ինչպես Բաքվի մարզը։ Այն պետք է դառնա գերմանական կոնցեսիա (ռազմական գաղութ)»[21]։ Ռոզենբերգը իր 1942 թ. հուլիսի 27-ի «Կովկասը վերափոխելու մասին» հուշագրում այսպես էր բնութագրում այդ խնդիրը. «Կովկասի խնդիրը նախ և առաջ քաղաքական խնդիր է և նշանակում է Գերմանիայի կողմից ղեկավարվող մայրցամաքային Եվրոպայի ընդարձակում կովկասյան պարանոցից դեպի Մերձավոր Արևելք»[22]։

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Հիտլերը չէր թաքցնում իր ատելությունը հայերի հանդեպ։ Օրինակ, լեհական պատերազմի նախօրեին ողջերթ մաղթելով իր գեներալներին՝ արագ ավարտելու պատերազմը և պահանջելով անխնա կոտորել լեհերին, նա լպիրշորեն բարբառել էր. «Այսօր ո՞վ է խոսում հայերի կոտորածի մասին»[23]։ Սա պատահաբար նետված արտահայտություն չէ։ Երբ գերմանական հրամանատարությունը ձեռնամուխ եղավ ազգային լեգեոնների գումարտակների կազմավորմանը կովկասյան ազգությունների ռազմագերիներից, Հիտլերը իր մերձավորներին հայտարարել էր. «Չգիտեմ, թե իրենց ինչպես կպահեն վրացիները։ Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմավորումը անչափ վտանգավոր գործ եմ համարում... Չնայած Ռոզենբերգի ու զինվորականների հայտարարությանը, ես հայերին էլ չեմ վստահում»[24]։

* * *

Պատերազմը ալեկոծեց մեր հանրապետության աշխատավորներին, բռնկեցրեց ներքին և արտաքին սփյուռքը։ Հանրապետությունում արդեն պատերազմի առաջին իսկ օրը բոլոր քաղաքներում և գյուղերում ծավալվեց հակաֆաշիստական բազմամարդ հանրահավաքների ալիքը։ Թերթերի խմբագրություններում լայն հոսքով ստացվում էին աշխատավորների հանրահավաքների բանաձևերը՝ գործարաններից ու ֆաբրիկաներից, կառույցներից ու կոլտնտեսություններից, գրողների և երիտասարդական կազմակերպություններից, ուսումնական հաստատություններից. դրանցով արտահայտվում էր հանրապետության աշխատավորության կամքը։

Այն տագնապալի օրերին որպես հուժկու հաղանգ հնչեցին հայ ժողովրդի մեծ զավակների՝ ժողովրդական բանաստեղծ Ավետիք Իսահակյանի, հռչակավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի և մեր հինավուրց հողի մյուս հայրենասերների ձայները, որոնք իրենց կենսափորձով և իմաստությամբ անմիջապես էլ գնահատել էին, թե խորհրդային երկրի ե հատկապես հայ ժողովրդի համար ինչ մահացու վտանգ է ներկայացնում գերմանական ֆաշիզմը։ Դժնդակ հոկտեմբերյան օրերին, երբ գերմանական հորդաները գրոհում էին խորհրդային հայրենիքի մայրաքաղաքը, Ավետիք Իսահակյանը «Հանուն հարազատ Մոսկվայի» իր հոդվածում վճռականորեն հայտարարում էր. «Հայերիս համար Մոսկվան սիրելի և հարազատ մայրաքաղաք է։ Այստեղ է վճռվում նաև մեր բազմաչարչար ժողովրդի գոյության հարցը, մեր ապագան։ Եվ մենք ոչինչ չպետք է խնայենք Կարմիր բանակի հաղթանակի համար»[25]։

Գործի անցան նաև արտասահմանյան երկրների մեր եղբայրներն ու քույրերը։ Աշխարհի տարբեր երկրներից, որտեղ հայկական համայնքներ

---

21 Նույն տեղում, էջ 106—107։

22 Նույն տեղում, էջ 178։

23 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна. Ереван, 1966, с. XII.

24 Տե՛ս Верт Александр. Россия в войне 1941—1945. М., 1967, с. 418—419.

25 Газ. «Коммунист», 31 октября 1941.

կային, անվերջ էր նամակների ու հեռագրերի հոսքը մայր Հայաստանի, խորհրդային երկրի ղեկավարության հասցեով։ ԱՄՆ-ում ապրող հայերի զանգվածային հանրահավաքի մասնակիցների հեռագրում, որը հաղորդվել էր խորհրդային դեսպանության միջոցով, կային այսպիսի տողեր. «Ամերիկահայերս, որոնց հայրենի հողն է պաշտպանում Կարմիր բանակը, զգում ենք, որ պարտավոր ենք Խորհրդային Միությանն օգնել նրա պայքարում այնքան ժամանակ, քանի դեռ ֆաշիզմը չի ոչնչացված ամբողջ աշխարհում»[26]։ Նման հեռագրերն ու նամակները բազմաթիվ են։ Մամուլում հրապարակվեց Խորհրդային Հայաստանի 26 ականավոր ներկայացուցիչների դիմումը արտասահմանյան երկրների հայերին։ Դիմումի տակ դրված էին Մարտիրոս Սարյանի, Ավետիք Իսահակյանի, Վաղարշ Վաղարշյանի, Հովսեփ Օրբելու, Հայկանուշ Դանիելյանի, Դերենիկ Դիմիրճյանի, Արմեն Տիգրանյանի և հայ մտավորականության նշանավոր այլ ներկայացուցիչների ստորագրությունները։ Նրանք արտասահմանյան երկրների հայերին կոչ էին անում միավորել բոլոր ուժերը ի պաշտպանություն Խորհրդային Միության՝ բովանդակ մարդկության նենգ ու վտանգավոր թշնամուն ջախջախելու համար։ «Մենք լավ գիտենք,— ընդգծվում է նամակում,— որ յուրաքանչյուր հայ, երկրագունդի որ մասում էլ որ նա գտնվելիս լինի, սիրում է իր մայր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը։ Եվ այս ժամին, երբ հարազատ Հայաստանի վրա, ամբողջ Խորհրդային հայրենիքի վրա ահեղ վտանգ է կախվել,—գրում էին նրանք,—մենք դիմում ենք ձեզ, կոչ անելով միավորել բոլոր ուժերը ի պաշտպանություն Խորհրդային Միության, ջախջախելու համար բովանդակ մարդկության նենգ ու վտանգավոր թշնամուն, ոչնչացնելու ֆաշիզմը»[27]։

Հայ ժողովուրդը մարտադաշտեր ուղարկեց իր կես միլիոնից ավելի որդիների ու դուստրերի։ Նրանք մարտնչում էին քաջաբար։ Հայ ժողովրդի ռազմագետ որդիները՝ 50-ից ավելի գեներալներ, ղեկավարում էին դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ, գլխավորում խոշոր զորամիավորումների շտաբներ ու քաղմարմիններ։ Խորհրդային Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանի (նա հասել էր ռազմաճակատի հրամանատարի աստիճանի), Խորհրդային Միության ծովակալ Ի. Ս. Իսակովի, ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակովի (Խանփերյանցի), և մի շարք այլ հայ անվանի զորահրամանատարների անունները լավ հայտնի են ամբողջ աշխարհին։100-ից ավելի խիզախ հայեր արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման։

Խորհրդային Հայաստանը՝ երկրի հարավում գտնվող այդ փոքրատարածք հանրապետությունը, վերածվել էր եռանդագին գործող զինանոցի և կարմիր բանակի մատակարարման հանգրվանի։ Հայաստանի աշխատավորությունը՝ բանվորները, գյուղացիները, մտավորականությունը ծավալեցին հերոսական աշխատանք։ Հանրապետության քիմիական արդյունաբերությունը ապահովեց երկրի պաշտպանական արդյունաբերությունը կարևոր արտադրատեսակներով։

Հայ սփյուռքը ևս օգնում էր մայր հայրենիքին։ Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչում էին 20 հազարից ավելի ամերիկահայեր։ Ամերիկյան մամուլում հռչակվել էր Քանթարյանների հայկական ընտանիքը։ Այդ ընտանիքի անդամները՝ Արսենը, Ալբերտը, Հրայրը, Արծվիկը, Հայկը, Վահագնը, Կարոն մարտնչում էին երկրորդ աշխարհամարտի տարբեր ռազմաթատերում, որպես ռմբակոծիչ օդաչուներ և ծովային սպաներ։ Այդ հայ ընտանիքի անվեհեր զավակների սխրանքները նշված են ԱՄՆ-ի բազմաթիվ ռազմական պարգևներով ու պատվոգրերով։ Կրտսեր լեյտենանտ Ջերարդ Գևորգյանի պատվոգրում, որը մարտի էր տանում «Թռչող ամրոց» ռմբակոծիչը, գրված է. «Օդային հարձակումների ժամանակ այս օդաչուի ցուցաբերած անվեհերու-

---

26 «Правда», 25 августа 1941.

27 Նույն տեղում, 17 օգոստոսի 1941։

թյունը, տոկունությունն ու մարտական հմտությունը պատիվ են բերում և՛ անձամբ իրեն, և՛ Միացյալ Նահանգների զինված ուժերին»։ ԱՄՆ-ի հայ բարեգործական միությունը 1951 թ. լույս ընծայեց «Մեր տղաները» գիրքը, որը պատմում է երկրորդ համաշխարհային պատերազմում ամերիկահայերի կատարած սխրանքների մասին։ Այդ գրքում ԱՄՆ-ի կոնգրեսի բարձրագույն պարգևին՝ «Փառքի շքանշանին» արժանացած քչերի թվումն էր Էռնեստ Դերվիշյանը։ Պատերազմի եվրոպական ռազմաթատերում բարձր ժողովրդականություն էր վայելում մի ամերիկահայ՝ կրտսեր լեյտենանտ Էնդրյու Կոշտոյանը։

Դիմադրության հակաֆաշիստական շարժմանը սփյուռքահայերի մասնակցությունը առանձնապես լայն թափ էր ընդունել Ֆրանսիայում, ինչպես նաև Բուլգարիայում, Հունաստանում, Հոլանդիայում։ Օրինակ, Ֆրանսիայում ստեղծվել էր Պայքարի հայկական ազգային ճակատ հանուն Ֆրանսիայի ազատագրության։ Ֆրանսիական դիմադրության շարժման մեջ առանձնակի տեղ է գրավում բանաստեղծ Միսաք Մանուշյանի խմբի գործունեությունը։ Ֆրանսիայի կառավարությունը նրան հետմահու պարգևատրել է Պատվո լեգեոնի շքանշանով և նրան է շնորհել Ֆրանսիայի ազգային հերոսի բարձր կոչում։ Ֆրանսիական դիմադրության շարժման մեջ իրեն անթառամ փառքով էր պսակել առաջին խորհրդային պարտիզանական գունդը՝ մեր ժողովրդի քաջարի զավակ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարության ներքո։ Հունաստանում ֆաշիստական բռնակալության դեմ գործում էր «Ազատություն» պարտիզանական շոկատը, որի մեջ կային շուրջ 1000 հայ մարտիկներ, որոնք փախել էին ֆաշիստական ճամբարներից և ազգային լեգեոնի ստորաբաժանումներից։

Խորհրդային Միությանը նյութական օգնություն ցույց տվեցին սփյուռքահայերը։ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Մերձավոր Արևելքի երկրների, Իրանի և Կիպրոսի, շատ այլ երկրների առաջադեմ հայ համայնքները, ինչպես նաև Էջմիածնի կաթողիկոսարանը՝ աշխարհի բոլոր հավատացյալ հայերի կենտրոնը, լայն համաշարժում ծավալեցին «Ստալինգրի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների կառուցման և Կարմիր բանակի այլ կարիքների համար միջոցներ հանգանակելու նպատակով։

Ամբողջ աշխարհի հայերը խորապես գիտակցում էին, որ միայն ֆաշիզմի ոչնչացման, հիտլերյան կոալիցիայի զինված ուժերի ջախջախման շնորհիվ է հնարավոր մեր ժողովրդին փրկել ֆիզիկական բնաջնջումից, պահպանել նրա ազատությունն ու անկախությունը։ Պատմությունը հաստատեց այդ ճշմարտությունը և բարձր գնահատեց հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում մեր նվաճած ընդհանուր հաղթանակի մեջ։ Մտովի ընդգրկելով պատերազմի ամբողջ փշոտ ուղին, խորապես համոզվում ես, որ չնայած բոլոր ձախորդություններին ու զրկանքներին, մեր պատմության մեջ թույլ տրված սխալներին ու բացասական երևույթներին, երկրի ժողովուրդները համբերատարությամբ էին հաղթահարում թե՛ պատերազմի, թե՛ հետպատերազմյան շրջանի բոլոր դժվարությունները։ Հաղթահարում էին, քանի որ միասին էին։ Այս միտքը մենք կրկին ամբողջ ուժով ընդգծում ենք մեր ոչ դյուրին ժամանակներում, երբ չափից ավելի են սրվել ազգամիջյան հարաբերությունները, երբ զգալիորեն երերվել է խորհրդային հասարակության միասնությունը։ Եվ հազար անգամ իրավացի են այն ժամանակակից հեղինակները, որոնք իրենց հոդվածներում արդարացիորեն նշում են, որ բուն դժբախտության պահին՝ ողբերգական 41-ին, երբ գերմանացիները հեռադիտակով Մոսկվան էին դիտում, մենք ինչ-որ բանով ավելի ուժեղ էինք, քան այժմ։ Եվ դա այն պատճառով, որ մենք այն ժամանակ միասնական էինք։ Սա է ճշմարտությունը։ Մենք չպետք է մոռանանք պատմության այս դասերը, որպեսզի նորից չսխալվենք, նորից դրիպումներ թույլ չտանք։